ՀԱՐԻՒՐԻՑ ԱՒԵԼԻ ԳԵՏԱՇԷՆՑԻՆԵՐ ԱՊԱՍՏԱՆ ԳՏԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Ստեփանակերտ, 5 Մայիսի, Մ.Տ.Կ.,- Շաբաթ, Մայիսի 4ի կէսգիշերին Ստեփանակերտ հասան հարիւրից աւելի գետաշէնցի կանայք եւ երեխաներ: Արտակարգ դրութեան զինուորական պարետատան երեք ուղղաթիռներով այդ օրը ժամը 19.30ին գետաշէնցիները տեղափոխուել էին Ստեփանակերտի օդանաւակայան, որն արդէն շրջապատուած էր ՕՄՕՆականներով:

Ստեփանակերտի ներքին գործերի բաժնի աշխատակիցների ուղեկցութեամբ օդանաւակայան էին ուղղուել երկու աւտոբուսներ, սակայն ՕՄՕՆականները արգելել էին հայերի մուտքը, սպառնալով անախորժութիւնների պարագային գնդակահարել գետաշէնցիներին:

Այս լուրը լսելուն պէս ստեփանակերտցիները հաւաքուել են ներքին գործերի բաժնի շէնքի առջեւ՝ պահանջելով բաց թողնել փաստօրէն պատանդի դէրում յայտնուած գետաշէնցիներին: Միաժամանակ կանանց մարզային խորհրդի անդամները հանդիպել են զինուորական պարետ գնդապէտ Ժուկովի հետ, պահանջելով մարտական տեխնիկա եւ զօրք յատկացնել ՕՄՕՆականների շղթան ճեղքելու համար:

Միւս կողմից զինուորական իշխանութիւնների վրայ մեծ ճնշում է գործադրուել նաեւ ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորների եւ Հայաստանի իշխանութիւնների կողմից: Պարետատան շէնքում էր գտնուում նաեւ Կոմկուսի Ստեփանակերտի քաղկոմի քարտուղար Հ. Մելքումեանը, որն ապահովում էր կապը քաղաքացիական եւ զինուորական իշխանութիւնների միջեւ: Գիշերուայ ժամը 22ին Կանանց խորհրդի նախագահ Գրետայ Սահակեանը յայտնել էր, որ զինուորական պարետը հրաժարւում է որեւէ կերպ խառնուել այդ գործին: «Ադրբեջանի Ներքին Գործերի նախարար Ասադովը արգելում է գետաշէնցիների մուտքը ԼՂԻՄ»,- ասել է գընդապետ Ժուկովը: Սակայն ընդամենը մի քանի րոպէ անց նա յայտարարել է, որ ինքը անձնական պատասխանատուութեամբ հրամայել է բացել դէպի օդանաւակայան մուտքը: Ժամը 11.25ին հայերը զինուորականների ուղեկցութեամբ մտել են օդանաւակայան եւ կէս ժամ յետոյ 109 գետաշէնցի կանայք եւ երեխաներ փոխադրուեցին հիւանդանոց: Առողջական վիճակի ստուգումից եւ գրանցումից յետոյ նրանք տեղափոխուեցին քաղաքացիների տները:

Ստեփանակերտում ապաստան գտածների մէջ կան նաեւ մի քանի մարտունաշէնցիներ: Յայտնի դարձաւ, որ օդանաւակայանում գընտուելու ժամանակ ազերիները փորձել են մօտենալ կանանց ու երեխաներին, սակայն այնտեղ գտնուող զինուորական փոքրիկ պահակախումբը թոյլ չի տուել որեւէ բռնութիւն:

Ստեփանակերտում ապաստանած գետաշէնցիների եւ մարտունաշէնցիների հետագայ ճակատագիրը եւ կարգավիճակը մնում է անորոշ: